


2.12. Նկարներով տրված խնդիրներ

Երեխայի հետ զբաղվողին

1.



Մեկ խնձորը քանի՞ գրամ է կշռում:

Նկարում նժարավոր կշեռք է (շուկայից կարող է իմանալ), որի մի նժարին (կողմում) 3 միանման խնձոր է դրված, մյուսին՝ 50 և 100-գրամանոց կշռաքարեր: Կշեռքը հավասարակշռված է: Դա նշանակում է՝ տարբեր նժարներից դրվածները նույնքան են կշռում: Տվյալ նկարից երևում է, որ 3 խնձորը $50 + 100 = 150$ (գ) են կշռում: Եթե 3 խնձորը 150 գ են կշռում, ապա մեկը 3 անգամ դրանից քիչ կկշռի՝ $150 : 3 = 50$ (գ): Ուրեմն մի խնձորը 50գ է կշռում:

2.



Մեծ խնձորը փոքրից քանի՞ գրամով է ծանր:

Նկարն ասում է, որ մեծ խնձորն ու 50գ-անոց կշռաքարը ճիշտ այնքան են կշռում, որքան փոքր խնձորն ու 100գ-անոց կշռաքարը: Եթե մեծ խնձորի (ծախ) նժարից կշռաքարը վերցնենք, ծանրությունը 50գ-ով կպակասի: Որպեսզի կշեռքի հավասարակշռությունը չխախտվի, մյուս նժարին եղածն էլ պիտի 50գ-ով պակասեցնենք: 100գ-անոց կշռաքարը նժարի վրայից վերցնենք և փոխարենը 50գ-անոց կշռաքար դնենք:

Ուրեմն մի նժարին մեծ խնձորը կլինի, մյուսին՝ փոքր խնձորն ու 50գ-անոց կշռաքարը, և կշեռքը հավասարակշռված կլինի: Սա էլ նշանակում է, որ մեծ խնձորը կշռում է փոքր խնձորի և էլի 50գ-ի չափ (միասին), այսինքն՝ մեծ խնձորը փոքրից **50գ-ով** ծանր է:



Նուշում

Նկարներով տրված խնդիրները լուծելիս երեխաներին ժամանակ առ ժամանակ հանձնարարե՛՛ք նկարները տե՛՛ղծել («ի՞նչ ես այս նկարից հասկանում»):




Ազատ Նավարկություն

(Եթե խնդիրները լուծելիս դժվարանաս, վերևում լուծված խնդիրներին նայիր: Ուշադիր նայիր, մտածիր ու խնդիրը հաստատ կլուծես:)

1. Մի խնձորն ինչքա՞ն է կշռում:



2.



Մի խնձորը քանի՞ գրամ է կշռում:

3. Մեծ խնձորը փոքրից քանի՞ անգամ է ծանր



4.



Ո՞ր միրգն է ավելի ծանր և քանի՞ անգամ:

5. Մեծ խնձորը փոքրից քանի՞ գրամով է ծանր:




6.




Ո՞ր միրգն է ծանր և քանի՞ անգամ:

7. Մրգերից ո՞րն է ավելի ծանր և ինչքանո՞վ (տանձր, թե՞ մեծ խնձորը, տանձր, թե՞ փոքր խնձորը)



8.




Երկու խնձորը միասին 400 գրամ են կշռում: Մեկ տանձը որքա՞ն է կշռում

9. Չախ նժարին դրված 5 դեղձը 1 կիլոգրամ է կշռում: Մի խնձորը որքա՞ն է կշռում:



10.



Մեծ խնձորը 200 գ է կշռում: Մի փոքր խնձորը որքա՞ն է կշռում

11. Մի ձմերուկը 9 կգ է կշռում: Մեխը որքա՞ն է կշռում:

